

–Ա՞ս է տունը, կհարցունեն հիւրերը դրան առջեւ:

–Աս է, աս, կպատասխանէ տիկին Թ... , ներս հրամմեցէ՛ք:

–Միալմամբ ուրիշ ուրիշ տուն մը չմտնենք:

–Չէ, չէ, հոս պիտի գաք:

Հիւրերն, որք երեք տիկիններէ կը բաղկանային՝ ներս կը մտնեն:

Պէտք է գիտնալ, որ այս հիւրերն Ընկերութեան մը անդամներ էին, որք տունէ տուն պտըտելով տիկիններէ դրամական նուէր կհաւաքէին իգական սեռին դաստիարակութեան համար:

–Բարի եկաք, *մաղամներ*, կ'ըսէ տիկին Թ...:

–Բարի տեսանք, կպատասխանեն երեք հիւրերն, որոնց մինն քիչ մը կը սրդողի *մաղամ* բառին վրայ. կ'երեւի որ *ղըմուսզէլ* էր:

–Ի՞նչպէս էք, աղէ՛կ էք:

–Փառք Աստուծոյ. ձեզի տեսանք աւելի աղէկ եղանք:

–Ողջ եղէ՛ք, աստիկայ ձեր ազնուութիւնն է:

–Ի՞նչպէս ժամանակ կ'անցունէք գիշերները:

–Շիտակը, կանուխ կպառկինք. մեծաւորս պտըտել չսիրեր, հիմակուան զբօսանքներէն ալ շատ չսխորժիր:

–Աղէկ կ'ընէք:

Աղջիկն որ աճապարանօք հագուած էր՝ սենեակէն ներս կմտնէ եւ հիւրերու ձեռները կթոթուէ:

–Աղջի՛կս, ձեռք չպագնէ՛ս:

–Տէր ողորմեա, այդ սովորութիւնը չկայ հիմայ, կպատասխանեն հիւրերը:

–Ինչո՞ւ չկայ, թո՛ղ տուէք որ պագնէ, կաղաչեմ:

–Թող չենք տար:

–Իրաւ որ կը սրդողիմ, հայրն ալ իմանայ նէ՛ կը բարկանայ ինձի. կ'աղաչեմ թող տուէք, որ ամենուդ ալ ձեռները զատ - զատ պագնէ. մեղա՛յ, բերանը չմաշիր ա՛...:

–Շատ լաւ:

–Մենք մեր մեծերէն ինչ որ տեսեր ենք նէ՛ անանկ կ'ընենք: Ձեռքէս եկածին չափ աշխատեցայ որ աղջիկս կրթեմ, ֆրանսերէն ալ սորվեցուցի.